

# Հ Ա Ռ Ա Չ Ա Ն Ք

•••••

ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԵՑ

ՎԱՐԴԱՆ ՔԱՄԱԼԵԱՆ

Խ Ա Ր Բ Ե Ր Դ Յ Ի

Գարձեալ մըթագնեց երկինքը Հայուն,  
Գարձեալ աւերմունք, գօս Հայրենիքը  
Գոռ որոտ կայծակ շանթ ու շառաչում,  
Կրկին արեան ծով, հեկ ու հառաչում:

Ահա լուում է, հեծ ու հեծկլտանք,  
Բիւրբիւր բերանից աղի հառաչանք,  
Թանձր անարկու խաւարն է տիրեր,  
Մոայն է պատեր մորմօքող սրտեր:

*Երկրորդ տպագրութիւն*

•••••

Թ Ի Ֆ Լ Ի Չ

Տպարան Ն. Աղանեանի Պօլից. 7

1915

891.99  
Ք-17

# ՀԱՌԱՉԱՆՔ

891.99

Բ-17

00000

13 APR 2011

147

ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԵՑ

ՎԱՐԴԱՆ ՔԱՄԱԼԵԱՆ

ԽԱՐԲԵՐԴՑԻ

ՀԱՅ. Խ  
Բ-17

1001  
4570

Նրկելով տարածքում



000000000000

Թ Ի Ֆ Լ Ի Զ  
Տպարան Ն. Աղանեանի Պոլիգ. 7  
1915

29.08.2013

60376

13 APR 2013

## Ա.Զ.Դ

Մտանով հարկ համարեցի յայտնելու յարգոյ հայ հասարակութեան, որ սոյն զբուկիս երկրորդ սպագրութիւնը, նախկին սպագրութիւնից անձուես իւր առաւելութիւնը ունի, ամենայն մասամբ, քի բարեփոխեալ եւ քի յաւելեալ ոսանաւորներով, որք ըստ կարելոյն ջանացեր եմ մասշտիբ ընել իմ պատուական ընթերցող ազգայիններուս:

ՀԵՂԻՆԱԿԸ



## ԽԱԶԱՏՈՒՐ ԱՐՈՎԵԱՆԻՆ

Ա Ր Դ Է Ն վաղուց է, որ չէ երևում,  
 Աստղիկդ ցուուն լաղուրթ եթերում,  
 Ախով աշխարհէն հրաժեշտ տալով,  
 Խփեցիր աչերդ, անուշիկ նինջով:


Օրէն սկսեալ մատաղ հասակիդ,  
 Փպիտ բնաւին չտեսար դէմքիդ,  
 Կեանքիդ Գոյութեան ամեն վայրկեանում,  
 Վէրքը անպակաս տեսար քո սրտում:

Այն, թէև սրտիկդ լիփլիք խոցերով ծածկուած  
 Փոխադրուեցար յաւիտենականութիւնը,  
 Եւ լըռիկ ննջում ես սև թաւշեայ ամայի մըթին  
 Գէջ գետնի խորքում, հանդերձ մօր Գոյ՝ գրկախառն  
 Պարուրուած, բայց և այնպէս այն վաղէմի փայփայած  
 Իղձերդ արդէն իրականացած լինելով ահա ծածանում  
 է քո յաղթանակի դրօշակը:

# ՆՈՒՆԵՐ

## ՎԷՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՂԻՆԱԿ

### Խ. ԱՐՈՎԵԱՆԻ ԱՆՄԱՀ ՅԻՇԱՏԱԿԻՆ



Ո՛ր Բ էս սոյ պօտա քեզ ենք փնտրուում,  
 Արդեօք մի տեղ կանս հայրենեաց գրկում,  
 Աւանդ անյայտ է տեղդ հանգստեան,  
 Սուրբ գերեզմանիդ կարօտն ենք քաշում:

Ո՞վ քեզ ամփոփեց դրաւ մէջ հողին,  
 Ո՞վ կար քո մօտը՝ այն ճգնաժամին,  
 Մի գուցէ դահիճք կեանքէդ զրկեցին,  
 Մի՞թէ այդպէս էր գիրը քո ճակտին:

Ախ, որ անգութը անձիդ բռնացաւ  
 Վառ կեանքիդ արև քեզանից առաւ  
 Չի գտուաւ մէն մի որ զքեզ փրկէր,  
 Կար մինը երկնում, այն ալ էր լռուեր:

Հայի դժնդակ աւուրց սգալիւր,  
 Եղար իրապէս անկեղծ պատմագիր,  
 Հարանց և եղբարց դարտեր պատմելով,  
 Մեր ծնով վշտերին, վշտեր բարդեցիր:




Տոչորուած ազգիդ սիրոյն հալուելով,  
 Նրա հրովը հն միշտ վառուելով,  
 Ամեն մի բառը, սըրտիդ խորքերէն,  
 Նկարագրիր հոգիդ տաղուելէն:

Թէև լռած ես դարտեր պատմելուց,  
 Արդէն վերաւոր մեր սիրտ խորվելու,  
 Բայց գրչովդ կերտած կոթող թանկագին,  
 Քո տեղ պատմում է «վէրք Հայաստանին»:

«Քո վեհազնութեան պատմական գրոց,  
 Հանդէպ խորապէս զլուխ ենք թեքած»,  
 Որ ատով եղար խաւարը ցրող,  
 Ադամայ մի՞էն՝ Հային ազատող:

Այդ տընկած ծառիդ, ճոխացան ճիւղեր,  
 Տերևով զարդարուն բողբոջ ոստիկներ,  
 Որուն արմատներ, աստ անդ տարածուած  
 Կոկոններ տալով, բացեր վարդիկներ:

Եւ արդ պիտ կանգնենք վեհիդ մահարձան,  
 Գոնէ անունիդ հիմնենք օթևան,  
 Գէթ մի՛ այսպիսով, մեր սէրն յայտնած.  
 Լինինք սրանով, մեր պարտք կատարած:



## Վ Ա Ր Դ Ի Ն Ս ՈՒ Ա Կ Ը

**Մ** Ա Ղ Կ Ա Ն Յ թագուհի վառ կարմիր վարդիկ,  
Իջեր էր ոստիդ սոխակը թռչնիկ,  
Քո նրբին փթիթ մեջ թերթիկներուն,  
Գլխիկը, դրած սէրդ էր դայլայլում:

Սաստիկ սիրահարուած գեղանի դէմքիդ,  
Հնա պճրանքներով շուրջդ էր ոստոսում,  
Քաղցր մեղեդեաց ելէջներով,  
Առ քեզ ի սրտէ, ներբողներ ձօնում:

Թոթոում էր սիրտը, տրոփում հոգին,  
Դողում էր վրադ, չըլլայ որ խամրիս,  
Դու էիր միայն նրա բերկրանք:  
Առանց քեզի (նա) չունէր երբէք կեանք:

Միշտ սարափում էր վրադ ներբողներ  
Սփռում էր շուրջը ծաւալում յեթեր,  
Վառ ոգևով արդէն, սիրոյդ տարեկով,  
Այտէդ համբոյրներ քաղէր տիւ գիշեր:

Փշալիւր թփիցդ վրայէն ժպտուն,  
Պիշ նայում էիր քո սիրահարին,  
Քողարկուած տերևով ինչպէս նոր հարսի,  
Գողարիկ ակնարկովդ հանելով հոգին:

Սա զերդ անմեղուկ խղճուկ էակին,  
Գրաւիչ տեսքովդ, ըրիր քո գերին,  
Ո՛վ վարդիկ սիրուն, բոսոր պսպղուն,  
Քո այդ հմայիչ, չքնաղ պատկերին:

Երբ (նա) մեղմագին սեղմեր էր կրծքում,  
Դէմքըդ շոյելով քեզ էր պաչ անում,  
Յանկարծ Ֆշրտաց այն անգութ հողմը,  
Տիրեց սարսափը քնքոյշ սրտիկին:

Շար շար նրբասուն, շէնշող թերթիկներդ,  
Խօլ հողմը հատ հատ պոկեց կոճղակէդ,  
Թօշմած թոռմած աստ անդ ցրցրուած,  
Սոխակը ի տես իսկոյն խելըռուեց:

Քո վեհ երկաթէ Իզմիրլեան թռչնեակդ,  
Որ էր պաշտելի էակ վարդենեացդ,  
Արձակեց ընդդէմ... հուժկու դայլանքներ,  
Բայց անաղ արդէն իրմէն խլած էր:

Լեցուեց վշտերով սրտիկը նրբիկ  
Արցունք աչերից շիթ շիթ թափելով,  
Տուեց հրաժեշտ չոր ոստիդ վերջին  
Դէպ լազուրթ եթեր սուրաց լալագին:



## Ա Շ Ո Ւ Ն

**Ե** Կ Ա ի աշունը թափւան տերևներ,  
Պճնազարդ ծառոց մերկացան ճիւղեր,  
Պատեր է մշուշ, եթերն է մռայլ,  
Տիրեր ամայանք համայն Տիեզեր:

Շիկաշանթ կայծակ վերևից խփում,  
Գոռ որոտներով, կուռում անդադար,  
Մէջ մշուշ անձրև, իրար են խառնվեր,  
Խիղճը բնութեան կարծես սպառուեր:

Ծովեր կատաղած սոսկ գոչուններով,  
Ալիքներ դէզ դէզ, դէս դէն են նետում,  
Դէպ ափն են վազում փրփուր բերանին,  
Բաղխում են հուժկու լանջքը ժայռերին:

Թռչունք շուարած հողմից մըրկից,  
Կծկուած նստեր չոր ոստիկներուն,  
Մեղամաղձ դէմքով, նայում են իրար,  
Իրաց վիճակին սև օրն են ողբում:

Համակ թռչելով ճախրում են յօղում,  
Իսկոյն հապճեպով ետ ետ նահանջում,  
Անյոյս դրութեամբ, իջնում ծառներում,  
Ծափտանքներով կտուցներն սրում:

Դաշտեր ամայի ձորեր ոռոգուն,  
Գետեր սրընթաց դէպ ծով են վազում,  
Սուգ է աշխարհը ամէն ինչ թմրուն...,  
Աննախանձ վիճակ վիշտ ու տրամութիւն:

Աշունը բերեց ցրտաշունչ օրեր,  
Լեռ, բլուր, դաշտեր՝ տխրանք են տիրեր,  
Իջած ասպարէզ սուլում է քամին,  
Տարերք խառնուած անցեր մին միւսին:



## Ս Ե Ի Ծ Ո Վ Ը

Ո՞վ դու սեիկ ծով՝ ինչո՞ւ ես յուզուում,  
 Գոռ կոհակներդ միշտ տարուբերում,  
 Այդ լայնածաւալ գեղանի ափունքդ,  
 Անհուն դարերով ծեծում ես ծեծում:

Ալիքներդ հապճեպ մին միւսին խփում,  
 Ջածի պէս ցանցիւր դէպ վեր են ուռչում,  
 Այդ կուտակ կուտակ խիտ Ալկիոններդ,  
 Գոռ գոչուններով դէպ գուրս նետրտում:

Վիթխարի ուռչով, փրփուրներ ճակտիդ  
 Բռնած հեքանքով արշաւում չորս դիդ  
 Գործելով հն միշտ, անզուսպ արձակում,  
 Ընկնում փշրում, ցիրուցիւր լինում:

Որտում ոռնում շուրջդ աղմկում,  
 Ինչո՞ւ բերնիցդ պիտակներ թափում,  
 Խօլ խայտանքներով, ծալք ծալք վէտվէտում,  
 Սոսկ շուցներով դէպ ափն ես խուժում:

Ալիքներդ բեկ բեկ, ալիքներդ պղտոր,  
 Ջարնում ես իրար անվերջ անդադար,  
 Քերծելով հզերքդ փախչում ես ետ ետ,  
 Կրկին հե ի հե վազում ես յ'ափերդ:

Միշտ վրդով հայեացք նետում ես շուրջդ,  
 Խոպ խոպ ծոփծալով, պատում ալիքներդ  
 Շառաջներդ սարսուռ լսում են անեղ,  
 Ահեկի ձայներ գորշ տարտարոսէդ:

Ալեաց խառնիխուռն տարափներ տեղում,  
 Երկինք և երկիր, իրար ես խառնում,  
 Դարու փոսն ինկած չունիս դադարում,  
 Միշտ սրտիդ խորքէն վշտերդ հառաչում:

Ո՞վ դու սեիկ ծով, ո՞վ ես սրոնում,  
 Որ Ֆշրուն ալիքներդ, դէս դէն վազցնում,  
 Ալ չկան չկան՝ «Տրդատ և Տիրիդ»,  
 Որ քո վրայէն դէպ Հոռոմ գնան:



## Ս Ա Ն Մ Ա Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

**Պ** ԱՐՁԵԱԼ մըթագնեց երկինքը Հայուն,  
Դարձեալ աւերմունք, գօս Հայրենիքը,  
Գոռ որոտ կայծակ շանթ ու շառաչում,  
Կրկին արեան ծով, հեկ ու հառաչում:

Ահա լսում է, հեծ ու հեծկլտանք,  
Բիւրբիւր բերանից աղի հառաչանք,  
Թանձր անարկու խաւարն է տիրեր,  
Մռայլն է պատեր մորմոքող սրտեր:

Այրիացեալ կանայք, հարս աղջիկք կուսանք,  
Բռնաբարումի եղած են բաժին...,  
Պէս պէս նախճիրներ գործող վայրենի,  
Դարևոր (սա) չիք դաւաճան ցեղին:

Միշտ զարհուրելի կարմիր տեսարան  
Ընկած է վիճակ խղճուկ հայութեան,  
Կրում անուելի ձիգ երկար դարեր՝  
Անվերջ անդադար բէթղեհ'մեան ջարդեր:

Երախայք հանում ի փորոց մարցըն,  
Թրատում մորթում, անմեղ էակներ,  
Եւ անասելի նոցա եղեռնանք...  
Տեսնող մարդկութեան բերում ցնորանք:

Արեան դաշտի մէջ ցնցող հողիններ,  
Տեսէք անկենդան, Մերազնեայք փոռուր,  
Շպրտուած դէս դէն, շլատուած դիեր,  
Որպէս աշնային թափուած տերևներ:

Մորթեր դէմքերի, քերծուած քերդողուած,  
Փշրուած գանկեր, ուղեղներ թափուած,  
Մին մինի կողքին, բարդի բարդ ընկեր,  
Դաշտք, հովիտք, բլուրք, ձորեր են լեցեր:

Մանուկներ մատաղ ընկած մայրերու  
Արիւններ հոսող կրծքերու վրայ  
Օդն է ցնդում նրանց ճչ-ճչանք,  
Ինկած լքման մէջ, չունին տէր տիրւանք:

Մշուշ է պատեր, երկինքը Հային,  
Մըրիկն է փչում... Թորգոմայ տանը,  
Կրծքերից վազած, արեան գետակներ,  
Արդէն տեսնում է՝ համայն տիեզեր:



### Գ Ա Ր Ո Ւ Ն Ը

**Ե** կ Ա Ւ Գ արունը, պճնուան ծառներ,  
 Ճոխ տերևներով զարգարուան ճիւղեր.  
 Ոստեր ոստերի խիտ խիտ փաթթըւած,  
 Զորք, բլուրք, հովիտք կանանչ է բռնած:

Լսուում են երգեր համայն կողմերից,  
 Պէս պէս ձայներով ամեն բերանից,  
 Ետում է կեանքը հրճուում են սրտեր...  
 Տիրեր խանդաղանք անհուն տիեզեր:

Թռչուններ խումբ խումբ բուրաստաններում  
 Ելևէջներով ոստէ ոստ նետուում,  
 Նրբին տերևոց, հետը խաղալով,  
 Աղմկում շուրջը իրանց ճողրանքով:

Ճեղքելով օդը սուրում են յեթեր,  
 Սաւառնում անծիր, գիրկն հորիզոնում,  
 Եւ վար իջնելով, աջ ձախ ճախրանքով,  
 Ծառերուն վրայ իրանց քըթըտում:

Գեղաթոյր ծաղկունք, թփոց վրայէն,  
 Հրապուրում են անց ու դարձողին,  
 Ոստեր ժաժուելով մեղմաշունչ հովէն,  
 Շարժում են գլուխ. կարծես բարևն:

Իրանց անուշիկ հոտուն բոյրերը,  
 Թեթևօրօր գեփիւուն, փշելով մեղմիկ,  
 Քշելով յուշիկ հեռուն տարածում,  
 Համայն մարդկութեան բերկրանք են առթում:

Ծաղկանց թագուհի, վարդն ալ պարտիզում,  
 Պիշ պիշ նայում է, իր սիրահարին,  
 Իւր գեղափթիթ տեսքով հմայուն,  
 Խղճուկ սոխակին ըրեր իր գերին:

Ո՛րը իջնելով, ոստիկին վրայ,  
 Երգում է սիրած սիրուհու սէրը...  
 Բռնել է ձայնը շուրջը պարտեզին,  
 Զ՛կայ դադարում. սիրուն զայլանքին:

Գարունը բերեր պերճ պայծառ օրեր,  
 Մէգ, մշուշ, ցրուեր երկնակամարէն,  
 Բացեր եթերը ջինջ կապոյտ դէմքը,  
 Արդէն ցնծութեան մէջ են ամէնքը...:

1001  
 0754



## Լ ՈՒ Ս Ի Ն Ը

Ո՞վ դու լուսին, ինչո՞ւ տխուր,  
 Յուշիկ յուշիկ ժուռ կուգաս,  
 Միթէ դձև ալ Հայի նման  
 Սև օրերով կը սգաս:

Ո՞ր ամպերը, դէմքիդ քաշած,  
 Մամտալով գնում ես.  
 Մոայլամած ու մելամաղձ,  
 Անտէր Հային նման ես:

Երբ կ'երևիս երկնի ծոցէն,  
 Ամպոց մէջէն լողալով,  
 Դու տրտմադէմ, հոգսերով լի  
 Հայերիս պէս միշտ ցաւով:

Այդ օդային տափաստանում,  
 Չունիս օր մը, դադարում,  
 Հայի նման անօթեան  
 Դու ամպոց մէջ թափառում:

Մերթ կը գոցուի, մերթ կը բացուի,  
 Ազօտ դէմքդ ո՞վ լուսնակ,  
 Խիտ ամպերը արգիլում են  
 Տեսքդ ցոյց տալ համարձակ:

Միշտ անմուռնչ շրթունքներդ,  
 Մուննի նման անխօսուն,  
 Գուցէ քեզ ալ, արգիլուած է,  
 Բողոք բառնալ պէս Հայուն...

Անթիւ աստղեր ցան ու ցրիւ  
 Դիտելով քեզ հեռուէն,  
 Ափ ի բերան խուլ զարմացմամբ  
 Հոգսէ ազատ կարծում են:

Մինչդեռ քո հեզ սիրտն էլ ամպոտ,  
 Հայի սրտին պէս վէրքոտ...  
 «Որ կը հեծէ ձիգ դարերով  
 Օրն ու արևն միշտ սուգով»:



## ԶԱՆԳԱԿՆԵՐ

Ա ՆՍ. ղօղանչում թովիչ զանգակներ,  
Որ իրանց ձայնով, լոյս են աւետում,  
Զարթիք սլ Հայեր, ձեր ծանր քնէն,  
Բացէք աչերնիդ վեր կացէք մթէն:

Դեռ կուզէք քնել նաննի օրօրով,  
Միթէ չեկաւ ձեր ժամը զարթնելու.  
Ալ բաւ չէ տարուէք սին երազներէն,  
Որդիք գերութեան միշտ ասել տալու:

Ձեր կենաց փառքը մինչ երբ ուրիշին,  
Թողնէք որ (նոքա) ընդմիշտ անուշէն,  
Այդ դուք պիտ լինէք... ստըրուկ կեանքէն  
Փրկող ձեր անձը բռնութիւններէն:

Տեսէք Պալքանեան եղբարց Միութեան,  
Լուծն են խորտակում թուրքի բրտութեան:  
Կրակ բոց եղած լափում են նրան,  
Ըստ իս կսպանան գահին տապալման:

Միթէ որ Հայեր դուք հն շարունակ,  
Դարեր համընթաց պիտ այդպէս մնաք...  
Ելէք՝ ձեր տեղից, զարնում են զանգեր,  
Քնանքի ժամին արդէն վերջն եկեր:

Ահն ղօղանչում դղորդ զանգակներ,  
Զարթիք սլ եղբարք, նայեցէք շուրջ ձեր,  
Գիրկն խաւարին հերիք չէ նիրհէք,  
Ամէն սք ելեր, էր դուք մնացեր:

## Ն. Ս. ՕԾՈՒԹԵԱՆ ԻԶՄԻՐԼԵԱՆԻ Ս. ՅԻՇԱՏԱԿԻՆ

ԻՇՏ մ'ալ աւելցաւ, ծնւլ ցաւոցդ Հնյ Ազգ,  
Դարեր համընթաց վըշտերով պատուած,  
Կոյր բաղըը գէթ մի դէպ քեզ չի ժպտած,  
Միշտ ճակտիդ կնիք սեով դրօշմած:

Ահն քն սգոտ մռայլուած դէմքիդ,  
Դրած ես ձեռքդ կնճըռոտ ճակտիդ.  
Մոցերով լեցւած էջերը սըլտիդ  
Ողբում ես մահը, երկաթէ վեհիդ:

Դու որոնում ես պաշտելի Պետիդ,  
Որ դընէր դարման շարաւոտ վէրքիդ,  
Բայց աւանդ որ (նա) ալ չկայ չկայ՝  
Ինչպէս իր անձը, քն ցաւը զգայ:

Արդէն քնջ գիտես, նորա բաղմազան...  
Բողոքներն ընդդէմ անիրաւութեան,  
Ժբրե կուռ ամբոց քո անձին պաշտպան,  
Անձը դրած էր քո սուրբ գոյութեան:

Արդ ծունըր եկած հանդէպ շիրիմին,  
Տաղով, մեղեղով, յուզուած հէկազին,  
Մորմոքուած սրտով, քո մեծ կորստին,  
Կուտաս համբոյրներ սուրբ գերեզմանին:

Իրեց հանգստի ի մէջ տաճարին  
 Սլացաւ հոգին թռաւ դէպ երկին  
 Քո Պետ սպատմական երկաթ Իզմիրլեան  
 Խլուեց քեզանից ընդմիշտ յաւիտեան:




## ԱՐԵՒՐ ԵՐԿՆԻ


 ՈՒՍՍՏՈՒ երկնի նրբապատ կրծքից,  
 Մազում է արփին շաղ տալով դէպ վար,  
 Ճոխ ճաճանչներով փոռում աջ ու ձախ,  
 Հապա մեր աշխարհն ինչչո՞ւ է խաւար:

Ձորեր և բլուրք, դաշտ ու հովիտներ,  
 Անփարատ թանձր մառախուղ պատեր,  
 Կեանքի օրորան այս հին աշխարհը,  
 Ձեղաւ որ պայծառ արև մը տեսնէր:

Որ միշտ ծառայած բարդ բարդ գոռ ամպեր  
 Գորշ մութն է պատած եթերն այդ երկրի,  
 Կարծես կայանն է բնութեան կրքի,  
 Եղած են թակայ անպուժ տարերքի...:



## ՈՐԴԻՔԸ ԱԻՆԵՐ ԵՐԿՐԻ

**Ա**ՅԻ աւեր երկրի դժբաղդ զաւակներ  
Աւեր հայրենեաց հիւժւած էակներ,  
Այս ի՛նչ կեանք, արև, այս ի՛նչ դառնութիւն  
Որ ձեզ տիրեր է անզուսպ բռնութիւն:

Ովքեր ձեզ զլորին գիրկըն սև բաղդին  
Իրանց թրին տակ ձեր կեանքը դրին,  
Որ անն խրոխտ կանգնած վեհութեամբ  
Նայում ձեր վրայ խոժոռ հեգնութեամբ:

Եւ արդէն նրանք տիրած ձեր ինչքին  
Բռնած մերկ սրեր կանգնած ձեր գլխին,  
Դուք որպէս գառներ եղած խոնարհ, հեզ  
Վազր ու գայլ դառած բզկում են զձեզ:

Ո՛հ լուում արդէն ձեր խուլ հառաչներ  
Սուրբի ու սովի օրհասն է տիրեր,  
Չեր պատմավայրեր արեան ծով դառեր  
Ծաղրում ձեր վիշտն համայն տիեզեր:




## ՀԱՅԻ ԱՂԵՐՍԸ

**Ե**ՐԿԻՆՔ և երկիր  
Աչքերն քեզ յառած,  
Եւ ամենայն բան  
Կամքիցդ է կախուած,  
Արդեօք չէ՞ս տեսնում  
Հայերիս վիճակ,  
Մեր հոգին խորված  
Մեր սիրտն է պապկած:

Նայէ բարձունքէդ,  
Կարմիր բորենուն...  
Դեռ ախոր ժանքով  
Ուտում է՝ հայուն,  
Ո՛հ միթէ այդ քո  
Անհուն երկնային,  
Դեռ չ'կատարում  
Կամքդ Աստուածային

Մինչ երբ մեզանից  
Երես դարձունես,  
Ալ հերիք հայէն  
Ոխ վրէժ լուծես,  
Ընկեր ենք անծայր  
Տանջանքի ծովում,  
Եւ արդէն անն  
Քեզ ենք աղերսում:



## ԱՐՑՈՒՆՔՆԵՐ

Ա ՚ն Հայաստան ընդէր լինիս  
 Բորիների որջարան.  
 Ինչո՞ւ այդպէս միշտ եղած ես  
 Հէգ հայերիս սգարան:

Ա՛խ Հայաստան մի՞թէ այդպէս  
 Միշտ պիտ' մնաս վշտարան,  
 Եւ կամ մի՞թէ անվերջ հային  
 Դու պիտ' լինիս տանջարան:

Ա՛խ Հայաստան դաշտ ու ձորըդ  
 Հայ արիւնով ներկուան,  
 Հովիտներդ լիք որբերով  
 Անհայր անմայր անպաշտպան,

Չունիս ոչ մի սիրտ կարեկից  
 Որ հէգ որդւոցդ սփոփէր,  
 Խնամատար իւր ձեռներով  
 Սրբէր նրանց արցունքներ:

Խտանում են օր ըստ օրէ  
 Որբիկների հոծ շարքեր  
 Անպատասպար և անտէրուկ  
 Գոներումն են մնացեր:

Ոտաբուպիկ մէջ ցնցոտեաց  
 Իւրեանց մերկուկ թաթիկներ,  
 Կառկառում են ճկճկուելով  
 Աղերսում են բարիքներ:

Բայց թէ ո՞ւր են աղնուասիրա (?)  
 Ողորմասէր այն անձեր  
 Որք ծնուած են միայն իրանց  
 Լեցնելու կոկորդներ:

Ա՛խ Հայաստան արդէն վաղուց  
 Անտանելի է վիճակ մեր,  
 Աչքերն խփած են չեն տեսնում  
 Բաղդերով լի մեծ ազգեր:



ՈՒՐ Է

Ան չեղաւ օր մը երգէի աղբիս,  
 Փրկապան՝ անդորր ու ազատ կեանքը,  
 Ան չեղաւ գէթ մի տեսնէի նրա  
 Դէմքին ծփծփար ճոխ ճոխ ժպտանքը:


Որ այլև անհետ բռնութեան օրեր,  
 Վերնար նրանից դժնդակ դարեր,  
 Եւ չի արատուէր ընտանեաց պատիւն,  
 Լինէր նա տէրը իր առազաստին:

Ան թէ տեսնէի որ կեանքի ազատ  
 Եղեր է կայան՝ աշխարհը մերին,  
 Արնակօլ սրտից վէրքոտ ծալքերէն  
 Լինէր դադարուած հառաչը հային:

Եւ ալ կաշկանդուած չըլլար նա այլոց  
 Ազատ թռիչքով սլանար առաջ,  
 Բացուած մայիսեան դուարթ վարդից պէս  
 Շարժէր նախանձը համայն մեծ ազգաց:

Տեսնէի հային ուսման տաճարում  
 Ուսուցն աւարտած՝ լեցուած գիտութեամբ,  
 Եւ լինէր ծաղկած լքուած մեր աշխարհ  
 Որ երբեմն ինչպէս եղած ոսկեղար:

Ալ այսուհետև չտեսնեմ հային,  
 Որ եղած լինի ծառայ օտարին,  
 Ան ընագեղուն մէջ իւր հայրենեաց  
 Գէթ տեսնեմ նրա ժպտանքը դէմքին:  
 Թուխ պ օրինակները իսպառ անհետուած  
 Շարաւոտ սրտի էջերը բուժուած:



խոշաօտ ոտքա ցիցմիկցիկ աշխ  
 իտեճոտ դոմաճարց լացդՊ ին օմիկ  
 միջիցի գղոս ճմն դմն ասեմախոմ գիրա  
 միքաղնո լամն մասասան քնա  
 ցաց զ գաց ցցիքասա միկալեմն ճ  
 միկաու ցլլափ բիցոսափ իոյնասա բիցոս  
 օմիկալեա մչուած ... միքա բիցոս  
 միցոսափ լոց րոմնաճ գլմիկ ցմիկ չՊ  
 միքամասեաբաբի ցմափի դափիկ մ ամ  
 միքրա ճմն զի ասն միկիկի միկ

## Զ Օ Ն

### ՆՈՑԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ

Առ մեծագոր եւ ինքնակալ ողորմած կայսեր  
ՆԻԿՈԼԱՅ երկրորդ համայն Ռուսիոյ:

**Ո**վ մեծափառ Արքայ մեծն Ռուսիոյ,  
Միշտ սէրդ ես տածում՝ զթառատ բարւոյ,  
Ներքոյ հովանուդ եղեալ Ազգերին,  
Կեանք ես պարգևում դու, միշտ սրտագին:

Եւ մի ես նայում ամենքի վրան.  
Գալով սրբասուն օրհնենդդ հայրական.  
Որը ուսած ես մեծ վարդապետէդ...  
Սրտաբուդիս ոգով, սիրող վեհապետ:

Միշտ մրրիկներից ազատ ապահով  
Լինիս ո՞վ Արքայ, ընդհանուր տոհմով,  
Բազկի հովանեաւ մեր մեծ սուրբ փրկչին,  
Գահդ անսասան մնայ ամրագին:

Եւ եթերային աստղերք, շար ի շար,  
Շուրջդ պատելով, փառքիդ փայլք տային,  
Լինիս եզակի... համայն աշխարհի,  
Ո՛չ մինը լինէր հասնող քոյ փառքին:

Նա և երկար կեանք թագաժառանգին,  
Լինի սիրելին «նա» իր մեծ ազգին,

Հեռատես, խոհուն, մտքերով բեղուն...  
Նմանի հոգով մեծ պապ Պետրոսին:

Մարս աստղի նման, լինի վարվուուն,  
Ունենայ վսեմ պանծալի անուն,  
Եւ փառքը հասներ դէպի ծն եթեր,  
Շնորհքն Աստուծոյ իր վրայ կաթեր:

Իսկ մայր Ռուսիոյ մեծ կայսրուհուն,  
Եւ իւր թանկագին դստերք սիրասուն,  
Անհուն երջան կեանք սրտի բերկրանք  
Լինի բաժինը «նոցա» մշտագին:

Կեցցես ո՞վ Արքայ մեր մեծ Նիկոլայ,  
Կեցցես վեհապանձ պետ տանն ռամանեան,  
Որ կուտաս ազգաց խնամքդ հայրական.  
Մեծ կայսերութիւնդ տեէ յաւիտեան:



Վ Ր Է Ժ

Տղերք, արդ ժամն է, ժամն է՝ փրկութեան,  
Ձեր սրով կտրել հանգուցը Գորգեան  
Ջնջեցէք ոսող ցեղը մահիկին

Աշխարհի մըջի այդ ճիւղերն են:

Մեր վեհ անձնուէր նահատակ քաջաց  
Ձեզ են բողբոլում՝ արիւններ նրանց,  
Առէք վրէժքն ձեր հարանց եղբարց,  
Որ հանգիստ քընին մէջ գերեզմանաց:

Հայի արեան ծարաւ, այդ բորիներին,  
Ձեր մերկ սրերը խրէք կուրծքերին  
Մեղացոց արեամբ դաշտեր ոռոգուին  
Չըթողնէք այնտեղ... նրանցից ոչ մին:

Վայրենի ցեղըն խիստ հրոյ ճարակ  
Վառեցէք նոցա որպէս մի պուրակ,  
Ձեր յաղթանակին անվերջ յիշատակ,  
Պարգեցէք «Կարին» հայոց դըրօշակ:

Եւ հասնի լուրը շտապ սուլթանին,  
Սարսափը տիրէ (Երլուրդի քէօջքին)  
Խաւարը պատէ Վոսփորի ափին  
Ողբ ու կոծ տեղայ խալիֆի գլխին:



Բ Ա Ր Ի Ե Ր Թ

Չե՞ք բարի երթ, ընկերներ,  
Հայոց կորիւն առիւծներ.  
Յարգանք ձեր վեհ սրտերին,  
Մեր թանկագին հերոսներ:

Ձեզնով պիտի փրկուի  
Դարեր տքնող Հայաստան,  
Ձեր յաղթական սուրբ արնով  
Պիտ՝ ազատուի ազգն հայկեան:

Ձեր անունից շանթահար  
Գիւրդն արդէն սարսափում,  
«Դեռ չի ելած դուք մարտի,  
Տրեխք ձեռին (նա) փախչում»:

(Նա) քնջ գիտէ որ դուք ոչ...  
Մահից երբէք չէք սոսկում,  
Հրով լեցուած ձեր սրտեր  
անահ, յառաջ ընթանում:

Երբ լուսեցիք բացվեր է  
Ասպարէզը զէնքերու,  
Իսկոյն ելաք դուք ոտքի  
Շուտով այն տեղ... հասնելու:

Ձիգ դարերով բարդուած  
 Ձեր վրէժքն առնելու,  
 (Նոցա) գործած եղեռնանց  
 Հաշիւները մաքրելու:

Այն սիրելեաց... շիրիմներ  
 Թուրքի արնով լուարու,  
 Եւ (շանց) այնկից սրբելով,  
 Շնոր օր...նոր կեանք...հիմնելու»:

Աստուած ձեր հետ, եղբայրներ,  
 Հայկայ ընտիր զիւցաղներ,  
 Փառք ու պարծանք ձեր անուան,  
 Հայաստանի փրկիչներ:



## ՀԱՅ ԿՌՈՒՈՂՆԵՐԻՆ

Ա ՅՊ ձեր վսեմ ճակտերին  
 Կուտանք համբոյր սրտագին,  
 Ի նշան սիրոյ յարգանքի  
 Արժանի էք լիովին:

Որ դուք խրոխտ անվեհեր  
 Կուրծք դէմ տուած թշնամեաց,  
 Խիտ շարքերը ճեղքելով  
 Փռում բիւր հազարաց:

Այս տեսնելով ոսոխք ձեր  
 Յետ փաղչում են սառսուրով.  
 Չունին այն սիրտ որ կրկին  
 Շարք կազմելով ճակատին:

Առիւծի պէս հերարձակ  
 առաջ էք նետում համարձակ,  
 Դար ու դաշտեր, տափնելով,  
 Փնտրում էք ձեր որսակ:

Նոքա որպէս նապըստակ...  
 Փախբրտում են դէպ լեռներ,  
 Ուր էլ մըտնին... չեն պրծներ,  
 Երբէք ձեզնից այդ օձեր...

Մկների պէս ծակամուտ  
Ապառժոց մէջ սքլում են, (պահում են)  
Անից անգամ չեն շինչում  
Կոկորդներն սեղմում են:

Տիրեր սաստիկ զարհուրանք  
Այդ վատ ցեղին արիւն խում,  
Որ տեսնում է իր վերջին...  
Թաղման ծէսն է կատարում:

Կենաց կեանքի արեան դաշտ  
Արդէն բացվեր լայն արձակ,  
Մեծ է Աստուած պիտ առնէք,  
Դուք յաղթութեան մրցանակ:

Կեցցէք տիտայնք քաջաչեան,  
Սուր ձեռ առիք փրկութեան,  
Դուք էք ազգին պատուաբեր  
Այն վեհ անձինք յանձնուէր:

Դարեր կանցնին շատ ու շատ...  
Բայց ձեր յանուն յաւիտեան  
Անջնջիլի յիշատակ  
Պատմութեանց մէջ պիտ ֆնան:



## ՄԵԾ ԳԱԶԱՆԻ ՄԱՆԸ

Քացեց վերին դահլիճը  
Եկան բազման վեհերը...  
Խիստ կարևոր մի գործի  
Մեծ խորհուրդ կար այդ օրը:

Այն պատմական (բորենուն)...  
Շատ միտք արին, ինչ անեն  
Ալպիօնը վեր կացաւ  
Վճիռ տուեց որ թաղեն:

«Տեսէք (ասաց) նեխօտիւեր  
Որպէս պահել քլխածին»,  
Լուրջ միտք արին որ իրօք  
Պատուհաս է աշխարհին:

Այդ մեծ ճանբուն... միշտ վրայ  
Խիստ անյարմար դատեցին,  
Պարտ ու պատշաճ, ըստ հարկին  
Գտան ելքը սատկածին:

Յանկարծ լուեց չորս կողմից  
Հրետների գոռունքներ,  
Խբում էին խիստ հուժկին  
Մինչ... հորելու գամբռոխն:

Արհաւիրքը կատարեալ...  
 Եկան հասան մահ երթին,  
 Գլոր մլոր տանելով  
 Խորքն իջըրին անդունդին:

Այդ թարխոտուած դիակը  
 Նախ մասերի... բաժնեցին,  
 Ապա նրա քմաղքը  
 Առով փառով... թաղեցին:

Թէև անշուշտ քիչ մը ուշ...  
 Ինչ որիցէ... վերջ տուին  
 Փնւ մարդկութեան իսկ՝ ժանտաղտ  
 Աւերակիչ միքրոպին:

Որը մի բան չարեց գովելու  
 Այլ միայն անուն շահեց բորենու...



Թէ եւ օտարք քեզ սիրում են,  
 Բայց դու երբէք մի հաւտար,  
 Որովհետև այդ շոյանքն է,  
 Կեղծ ու պատիր, անկատար:

Նոքա միշտ էլ սերտ, սրտաբար,  
 Շռայլում են ժպիտներ,  
 Եւ ճակտիցդ հն քաղելու,  
 Կեղծիքով լի համբոյրներ:

Մինչև իրաց նենգ մտային,  
 Ձիք խորհուրդքն աւարտած  
 Ճիգ են թափում, հուսկ տեսնելու,  
 Սև իղձերը կատարուած:

Բայց դու, հնյ ազգ, արթուն կացիր,  
 Ձէ մրափի ժամանակ...  
 Նաւիդ ղեկը դու հմտաբար,  
 Բռնիր ձեռքումդ ամրաբար:

Զգոյշ եղիր, կուլ չ'գնաս,  
 Փրփրագոռ ալեաց մէջ,  
 Յանկարծ չը տաս քո դարևոր,  
 Վեհ գոյութեանդ իսպառ վերջ:

Սէր միութեան զէնքը ձեռիդ,  
 Ամուր բռնիր սրտովին,  
 Թէ դու, կուզես որ չի մնայ,  
 Լոկ քո անուն աշխարհին:

ԱԶԳԻ ՊԱՀԱՆՋԸ

ԱՀԱ՝ դարևոր գահը՝ պատմական,  
Բազմաձև վեհապանձ Գէորդ Սուրենեան,  
Հօտիդ ընտրեալ, հովիւ թանկագին,  
Առ քեզ ողջունում՝ ազգդ սրտագին:

Գո՛ սրբազնութեան անձ վիճակուած,  
Հարցեր կան, պէս պէս, քո՛ առջև դրուած,  
Որը նախորդներդ... Թողին թէրի դէմ,  
Տեսնէր ազգի՛ այդ, քեզնով աւարտուած:

Հայի դարևոր, բաղձանքին լրիւ,  
Տայիր լուծում մը՝ յաղթականօրէն,  
Որ նա իր յոյսը, քո վրայ դրած,  
Վեհիդ կամեցմամբ, լինէր կատարուած:



Ձ Օ Ն

Ն Ո Ր Ի Ն Վ Ե Հ Ա Փ Ա Ռ Ո Ի Թ Ե Ա Ն

Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍ Բ.

Սրբազնասուրբ Հայրապետ եւ Աստուածարեւի  
Կարողիկոս Ամենայն Հայոց

Հ ԲԱԻԻՐՎԵՑԱՐ ի մեծ Սիօնէն,  
Նենս ապշած նայեց, ոճրանիւթ գահէն,  
Ինչպէս ծաղկազարդ, մուտքդ յաղթական,  
Նոր օր և նոր կեանք տուիր հայութեան:

Եւ արդէն անձ բազմաձև կնս գահիդ,  
Ո՛վ մեծդ ընտրեալ հովիւ հայ Ազգի,  
Աթոռ պատմական, մեր սուրբ հայրերի,  
Աթոռ՝ պանծալի, պարծանք հայերի:

Ձոր հիմնեալ պարթև մեծն Գրիգորի,  
Ի գլուխ կանգնեցար, իջման տաճարի,  
Նման Մովսիսի, արթուն դիտելու,  
Հօտիդ չարեաց դէմ, միշտ պայքարելու:

Ահն տեսնում ես, վիճակ մեր արդէն,  
Մեզ կեանք պարգևիր քո՛ այդ գահոյքէն,  
Տես ենք հայրական հայեացքիդ կարօտ,  
Ի կատար ածիր, մեր իղձերք թերոտ:

Հարթիր մեր ուղին, պատած տատասկով,  
 Հարթիր՝ մեր շաւիղն, փշոտ ու քարոտ,  
 Տես սա թրծւած, մեր հոգիք մաշոտ,  
 Մեր սրտեաց նրբին լարիկներ բեկոտ:

Որ արդ նախորդիդ ձեռնարկած գործին,  
 Պիտ գլուխ անցնիս, սրբութեամբ հարցին,  
 Լիայոյս սրտով դէպ քեզ ենք յառած,  
 Վճիռդ արդար տեսնենք կատարուած:

Մենք սրտատրոփ նայեմք անհամբեր,  
 Բուժել ձեռքովդ անհուն մեր վէրքեր,  
 Դա, արդէն իրօք վեհէդ է կախուած,  
 Տալու մեր ձեռքը մեր իրաւունքներ:

Որը թողնում ենք գթառատ խղճիդ,  
 Խղճա վեհափառ քո խղճուկ հօտիդ,  
 Լեր մեր փրկողը, ժանտ շղթաներից,  
 Դարերով պնդուած Գորգեան հանգուցից:

Կեցցեն դու յաւէտ մեր մեծ վեհապետ,  
 Կեցցեն բազմատանջ սի քաջդ հովուապետ,  
 Տէր մեր երկաթէ անյաղթ Իզմիրլեան,  
 Պարծանք պաշտելի համայն հայութեան:



## ԿԵՂԾ ՀԱՄԲՈՅՐՆԵՐ

**Ա**ՅԴՊԷՍ յուսացէք՝ թէ գայլը գառին,  
 Կը լինի ընկեր, կողք կողքի կ'ապրին,  
 Փինջ փնջի տուած կ'արծին միատեղ,  
 Սա քանբաղդ ու քանդ ցաւ աշխարհը նեղ:

Այսպէս յուսացէք՝ առիւծն ու վագրը,  
 Պիտ պարզեն զիրարց ջլոտ բազուկներ,  
 Իբրև հարազատ եղբարք հայրենեաց,  
 Մէջը ապրելու բնութեան բարեաց:

Այդպէս յուսացէք՝ թէ փիղն ու ցուլը,  
 Այլ սերտ կապերով, պիտ դաշն կնքեն,  
 Անտառի միջի այդ հոտտորներ,  
 Սիրաբուղիս ոգով, պիտ տան համբոյրներ:

Այդպէս յուսացէք՝ կոկորդիլոսը,  
 Թափում է անկեղծ շքր շքր արցունքներ,  
 Եւ վիզը ճկած, նայում հէք դէմքով,  
 Գառնուկի նման, անմեղի սրտով:

Այդպէս յուսացէք՝ որ մուկն ու կատուն,  
 Որն իրանց սրտէն, և այլ կը հանուն,  
 Անցեալք մոռնալով, կուտան թաթիկներ,  
 Հաշտ աչով նային կ'ըլլան եղբայրներ:

Այդպէս յուսացէք՝ օձն ու գորտը,  
Թէ որ հանդիպին առևաց եզերքներ,  
Անխարդ բարեկամ մօտկեմօտ գալով,  
Պիտի լզվրդեն մին մինի պռնկներ:

Այդպէս յուսացէք՝ կրակն ու ջուրը,  
Այլ մինը միւսին պիտ' չըլլայ ներհակ,  
Պաշիկներ տալով անկեղծ սիրաբար,  
Զիրարը գրկելով, կ'ապրին հաշտաբար:

Այդպէս յուսացէք՝ այլ այսուհետև,  
Կ'ըլլան հաւասար ազոռն ու սոխակ,  
Նա էլ նրան պէս, պատուաւոր էակ,  
Պիտ' տայ վարդերին, գեղգեղուն դայլակ:

Այդպէս յուսացէք՝ ուժեղը տկարին,  
Կ'ընէ նրան տէր իր իրաւունքին,  
Այդպէս յուսացէք՝ գոռոզ մեծատուն,  
Կ'ըլլայ բարեկամ խղճուկ աղբատին:

Օսմանեան սահմանադրութեան առթիւ.



## Գ Ր Ի Զ

**Գ** Ր Ի Զ, դու Հային չըլլայ որ ատես,  
Պակասը նրան ճակատին դրոշմես,  
Թէև անտեղի... շռայլ է գովեստ,  
Միշտ շոյիր նրան, որ սիրտը շահես:

Թէկուզ (նա) լինի ուղտից ծամուուն,  
Ասան, նման ես ողորկ սօսկնուն,  
Իսկ եթէ օր մը, դպչիս իր թեւին,  
Գլխիդ լուտանքներ կը տեղան գոյն գոյն...

Գրիչ, տուր Հային յարգանք սիրազին,  
Մըտէք չանցընես, թէ նրա ինչին...  
Կուզես որ նրան, դու լաւ երեսս,  
Նետէ անութեն, միշտ անուշ կըլլաս:

Տեսար կեղտի մէջ, երբ փուֆ հոտում է  
Գրիւր այդ հոտը վարդի բուրում է.  
Քիթդ բռնելով չը նայիս դէմքին,  
Գիտնաս որ այդ խիստ ցաւ կազդէ սրտին:

Երբ յանցանքները շարես ճակատին,  
Մէկէն խօլըրտին աչքերը վրադ,  
Քիթ ու պոկունքը, իսկոյն կը թթւին,  
Վեց լիտըր մեղրով մեղայ թէ ուտուին:

Չէ որ հայն արդէն, ո՛չ իրան համար,  
Ուրիշին օգտին նա եկեր աշխարհ,  
Իւր կենաց փառքը... ոտի տակ տալու  
Միայն օտարին սիրտը շահելու:

Սո՛ւս, այդպէս բառեր մի տար երեսին,  
Ծածկէ... մի շեշտեր, դուր չեն գար ներսին,  
Իւր լից յարածամ, հայի անիւին,  
Որ չի ճորնչէ նա քո՛ ականջին:

Եկ քեզի, գրի՛չ, գիտցի՛ր քո՛ խօսքեր,  
Լեզուդ հեռուններ շատ մի՛ տարածեր,  
Յիսուսի նման դու ալ, կապտակուիս,  
Գիտնաս որ Հայր, ճիշդը չի սիրեր:



## Ժ Ո Ղ Ո Վ Ը

ԵՐԲ որ հրատապ հայր ու ե է...  
Կարևոր դործի ժողով մը ընէ,  
Նախ քան խնդիրը, երեք անձերը,  
Որ, ու կիրք, չարիք, ներս կ'հրաւիրէ:

Իբրև նախագահ՝, մինը վեր կենում,  
Ինչ որ մի քանի բառեր թոթովում,  
Լուրջ հարցի միտքը ամփոփ պարզելով,  
Նստում է տեղը, խոնարհումներով:

Կարծեաց փոխանցման խորհուրդն սկսում,  
Յանկարծ սրահը, ժխոր աղմկում,  
Իբր ասպարէզ կոկորդ խզրուման  
Բանը հասնում է... բռունցք բաժանման.

Եւ հուսկ աթոռներ ձեռք ձեռքէ խլում  
Սրտանց իրարու քիթ պռկունք դուրում.  
Ահա քեզ հայի ժողով տուր դմբակ,  
Ո՛չ մի ազգ ունի սրան օրինակ:

Լաւ մը իրար հետ հաշիւ տեսնալով,  
Կրքերին առատ գոհացում տալով,  
Գործը սապէսով՝ լուծման է յանգում  
Հարցը աւարտուած ժողովն է ցրում:



# Մ Ի Ն Չ ԵՐ Բ

**Մ** Ի Ն Չ Երբ պիտ' տանինք սա նախատական,

Օտարի լուծը, մեր վզին վրայ,  
Միթէ որ անվերջ, տքնանք ու ճգնանք,  
Մեզ բաժին ընկեր հիւժ ու հեծեծանք:

Մինչ Երբ թշնամուն խոնարհենք կամքին,  
Գործիքը եղնինք նրա հաճոյքին,  
Դարեր անընդհատ, հեծած մեր ուսին,  
Իբր հաւասար մի հեղ գրաստին:

Կաթիլ մը պատիւ արդէն մեր դէմքին,  
Իսկի չթողուց խեց թշնամին,  
Խայտառակ դերը (նա) շարունակում,  
Պղծում, աւերում, ամեն սրբութիւն:

Թէ կուզենք տեսնել, մեր պատիւ փրկուած,  
Սա... եղեոնանքէն ընդմիշտ ազատուած,  
Սիրավառ ոգւով, ձեռք պարզենք իրար,  
Իջնենք կեանքի դաշտ, սրեր մերկցուցած:

Մինչ Երբ տաճկ ազգի փաթւենք ոտերուն,  
Գուժ հայցենք նրա, անխիղճ քար սըրտէն.  
Դեռ բաւ չէ՞ կուչ գանք... քաջ գիտենք արդէն  
Պակընիս չորցաւ փէշն համբուրելէն:



# Ս ԷՐ

**Մ** Ի Ն Չ Երբ լոկ գոչենք կեցցէ Հայաստան,  
Սերտ սիրով ձուլուած, պէտք է գործնական:  
Ետ առնենք խլուած, մեր ազգի... փառքը  
Ապա թէ ասենք, Կեցցե՛ Հայաստան:


Փարւինք իրարու սիրով սրտագին,  
Ինչպէս մի հոգի, մի սիրտ, մի մարմին,  
Սէրն է՝ փրկողը, անկեալ Հայութեան,  
Սիրով պիտ յաղթենք այնինչ... ամեն բան:

Սիրով մենք միայն, մեր սուրբ աշխարհը,  
Թշնամուց կառնենք, կըլլանք զուտ տէրը,  
Սիրով պիտ վանենք մեզ տիրող ցեղին.  
Սիրով՝ վերջ պիտ տանք, մեր սև օրերին:

Սիրով պիտ հասնինք Հայք մեր ըղձանքին,  
Տէրը պիտ ըլլանք լրիւ մեր անձին.  
Հանգիստ հայրենեաց, գիրկն հարազատ,  
Ապա իբրև մարդ, պիտ ապրինք ազատ:

Ամեն ազգութիւն հասաւ իր փառքին,  
Դեռ մենք լիզում ենք ոսողի ոտներ...  
Ինչո՞ւ այն ազատ ազգերի կարգին,  
Չունենք բաղդը ապրել մարդկային:

Դեռ պիտ' լով գողննք կեցցե Հայաստան,  
 Հայք սրտով ձուլուած պէտք է գործնականն,  
 Ետ առնենք խլուած, մեր թուրն ու թագը,  
 Ապա թէ ասենք, կեցցե Արմենիան:



## ԱՆՈՒՂՆԵՐԻ ԱՇԽԱՐՀ

**Ս**ԻՐՏ իմ անուշ հանգիստ կեցիր,  
 Մէջ աւերուած այդ յարկին,  
 Օհ, հերիք է, անխղճօրէն,  
 Չարնես կրճքիս տախտակին:

Վշտահարեալ ես այս կեանքից.  
 Թռչել կուզեմ դէպ անդին,  
 Բայց աւանդ որ անծանօթ եմ  
 Եղելութեանցն Անդիին:

Արդեօք կտոյ մի մէզերի մէջ  
 Հոգիների դրախտ մը,  
 Գէթ այդ անծայր եթերիցը  
 Լուր մը բերէր անհատ մը....

Ա՛խ, երանի արծուի նման  
 Սաւառնէի բիւ երկներ,  
 Իմ աչերովս տեսանէի  
 Թէ կան այնտեղ այդ փառքեր:

Երբ իրապէս անդ կայ կեանք մը  
 Հոգիների անտրտունջ,  
 Կեանք մը՝ յաւէրժ վայելքի մէջ  
 Հոգւոց ցնծանք միշտ անվերջ:

Ապա իսկոյն կը վճռէի  
Մընալ, ապրիլ այն տեղը,  
Ընելով զայն բնակավայր  
Կը թողնէի զաշխարհը:

Սիրտ իմ անուշ հանդարտ կեցիք  
Մէջն խաւար այդ յարկին  
Բնւ է խբես, խղճն, հիւժեակ  
Կրճքիս նրբին թելերին:

Բնւ փոթորկես, ալեկոծես,  
Յուզես, խռովես իմ հոգին,  
Թող կրակովս վառւեմ, հատնիմ,  
Մոխիր գառնամ անհետիմ:



|   | Էջ |
|---|----|
| Խաչատուր Աբովեանին . . . . .                | 5  |
| Վէրք Հայաստանի Հեղինակին . . . . .          | 6  |
| Վարդին Սոխակը . . . . .                     | 8  |
| Աշուն . . . . .                             | 10 |
| Սև ծովը . . . . .                           | 12 |
| Սահմանադրութիւն . . . . .                   | 14 |
| Գարունը . . . . .                           | 16 |
| Լուսինը . . . . .                           | 18 |
| Ջանգալներ . . . . .                         | 20 |
| Իզմիրլեանի յիշատակին . . . . .              | 21 |
| Արևը հրկնի . . . . .                        | 23 |
| Որդիքը աւեր երկրի . . . . .                 | 24 |
| Հայի աղերսը . . . . .                       | 25 |
| Արցունքներ . . . . .                        | 26 |
| Ո՞ւր է . . . . .                            | 28 |
| Ձօն Նոցին Մեծութեան կայսեր Նիկոլայ երկրորդի | 30 |
| Վրէժ . . . . .                              | 32 |
| Բարի երթ . . . . .                          | 33 |
| Հայ կոռուղներին . . . . .                   | 35 |
| Մեծ գազանի մահ . . . . .                    | 37 |
| Ներկայ Հայութեան . . . . .                  | 39 |
| Հայ ազգ . . . . .                           | 41 |
| Ազգի պահանջը . . . . .                      | 42 |
| S. S. Մատթէոս Բ. . . . .                    | 43 |
| Կեղծ համբոյրներ . . . . .                   | 45 |
| Գրիչ . . . . .                              | 47 |
| Ժողովը . . . . .                            | 49 |
| Մինչ երբ . . . . .                          | 50 |
| Սէր . . . . .                               | 51 |
| Անուրջների աշխարհը . . . . .                | 53 |



60376

